ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Հարությունյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն)
2019 թվականի հոկտեմբերի 17-19

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ՅՈՒՆԵՍԿՕ

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի առթիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կայանալիք համերգին և Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված ցուցահանդեսի բացման արարողությանը:

Ս. թ. հոկտեմբերի 17-19-ը գործուղվել էի Փարիզ՝ մասնակցելու Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի առթիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում

կայանալիք համերգին և Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված ցուցահանդեսի բացման արարողությանը:

Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի առթիվ համերգը կայացել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում 2019 թ. հոկտեմբերի 18-ին: Կոմիտասի 150-ամյա հոբելյանին նվիրված համերգային ծրագրում հանդես է եկել Հայաստանի պետական կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Ռոբերտ Մլքեյան): Երգչախումբը ներկայացրել է հանճարեղ կոմպոզիտորի հարուստ խմբերգային ժառանգությունը. հնչել են Կոմիտասի ստեղծագործական ժառանգության արժեքավոր նմուշներ՝ «Պատարագից» հատվածներ, հարսանեկան, լիրիկական, պանդխտության, աշխատանքային (հորովելներ) և այլ ժողովրդական երգեր: Համերգին, որպես մենակատարներ հանդես են եկել Նվարդ Ալոյանը (դաշնամուր), Սոֆյա Սայադյանը (սոպրանո), Ռազմիկ Բաղդասարյանը (տենոր), Վրեժ Ղարիբյանը (տենոր), Արմեն Գրիգորյանը (բաս), Հովհաննես Գրիգորյանը (բարիտոն), Մավր Մկրտչյանը (բարիտոն), Աշխեն Թադևոսյանը (մեցցո սոպրանո):

Համերգի կազմակերպումը ներառված էր Կոմիտասի ծննդյան 150-ամյակի հոբելյանական միջոցառումների ցանկում: Համերգի մեկնարկից առաջ հանդես եմ եկել ողջույնի խոսքով՝ կարևորելով Կոմիտաս Վարդապետի անփոխարինելի դերը Հայաստանի երաժշտական մշակութային ժառանգության մեջ:

Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված ցուցահանդեսի բացման արարողությունը տեղի ունեցավ նույն օրը: Ցուցադրության առաջին բաժնում ներկայանում էր համաշխարհային գրականության փայլուն գիտակ Թումանյանը, որն իր անձնական հարուստ գրադարանի գրքերի ճանապարհով հաճախ էր իր տանը «զրույցի բռնվում» օտարագիր մեծերի հետ, թափանցում նրանց գրական աշխարհն ու տալիս իր բնութագիրը նրանց: Ցուցադրության երկրորդ բաժնում ներկայանում էր Թումանյան մարդն ու ստեղծագործողը տարբեր ազգերի մտավորականների, մշակույթի և արվեստի գործիչների, թարգմանիչների

գնահատմամբ: Ի վերջո՝ ցուցադրությանը կարող էինք վայելել երեք տասնյակից ավելի լեզուներով թարգմանված և տարբեր տարիներին, տարբեր երկրներում հրատարակված գրքերի հավաքածուն, որտեղ ներկայացվում են Հովհաննես Թումանյանի ամենատարբեր ժանրի ստեղծագործություններ: Ցուցահանդեսի կազմակերպիչն ու իրականացնողը «Հովհաննես Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ն էր:

Գործուղման ընթացքում հանդիպում եմ ունեցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի մշակույթի հարցերով տեղակալ Էռնեստո Օտտոնեի և կրթության հարցերով տեղակալ տիկին Ստեֆանիա Ջիաննինիի հետ:

Էռնեստո Օտտոնեի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են մշակույթի ոլորտում Հայաստանի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջև ընթացող ծրագրերը և համագործակցության հեռանկարները: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մոսուլի վերականգնում» լայնածավալ ծրագրի իրագործմանը: Նախարար Հարությունյանը վերահաստատել է Հայաստանի պատրաստակամությունը՝ շարունակել ակտիվ մասնակցությունը ծրագրի իրականացմանը: Պարոն Օտտոնեն շնորհակալություն է հայտնել ծրագրին Հայաստանի ներգրավվածության, մասնավորապես, Մատենադարանի՝ մատենագրերի վերականգնման և հավաքածուների թվայնացման մասնագետների տրամադրման և Իրաքի համապատասխան մասնագետների համար Հայաստանում վերապատրաստումների կազմակերպման հարցում: Նա ընդգծել է, որ հայ մասնագետների բացառիկ փորձը շատ օգտակար կլինի այս հարցում:

Բարձր է գնահատվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի 4 մշակութային կոնվենցիաների կոմիտեներում Հայաստանի ակտիվ գործունեությունը: Անդրադարձ է կատարվել 2020 թվականի գարնանը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում Հայաստանի նախագահության շրջանակում ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՖՄԿ հետ համատեղ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կազմակերպվելիք միջոցառմանը, որը նվերված է

լինելու մշակութային բազմազանության և միջմշակութային երկխոսության ամրապնդմանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև մշակութային ոլորտի օրենսդրական բարեփոխումներին ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագիտական օժանդակության տրամադրման հնարավորությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի կրթության հարցերով տեղակալ Ստեֆանիա Ջիաննինի հետ հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել կրթության ոլորտում Հայաստանի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջև համագործակցությանը: Մասնավորապես, կարևորվել է մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտներում համագործակցության շարունակականությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ընթացիկ տարվա դեկտեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնագետները ճանաչողական այց կկատարեն Հայաստան:

Կարևորվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Հայաստանի ակտիվ համագործակցությունը՝ կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների և արհեստական բանականության կիրառման հարցում: Այդ համատեքստում ընդգծվել են Հայաստանի դրական ներուժը և առկա ձեռքբերումները:

Փարիզում Ֆրանսիայի ԱՅԲ FM-ի եթերում խոսել եմ կրթական խնդիրների մասին ու ներկայացրել կրթության ոլորտում նախատեղվող բարեփոխումները:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Մասնակցություն Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի առթիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կայանալիք համերգին և Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված ցուցահանդեսի բացման արարողությանը
2. Հայ մշակույթի հանրահռչակում Ֆրանսիայի Հանրապետությունում

3. ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Ֆրանսիայի Հանրապետության գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության խթանում

23.10.2019

Արայիկ Հարությունյան